# ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ (1973-2021) ՄԱՀՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

**Տիգրան անդրանիկ զաւակն էր Պէպօ եւ Ազատուհի Սիմոնեան-Գալայճեաններու եւ յաջողակ գլխաւոր ֆինանսական տնօրէնը Wunderman Thompson ընկերութեան Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի երկիրներու տարածքին: Իր ասպարէզին զուգահեռ, Տիգրան հայ կեանքի մէջ ներգրաւուած էր եւ լիբանանահայ համայնքի գործօն անդամ էր: Բազմաթիւ բարեգործական, մշակութային, ուսումնական եւ ընկերային ծրագիրներու յաջողութեան նպաստած էր՝ կազմակերպչական եւ խորհրդատուական իր բացառիկ կարողութիւններով:**



## ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Ժամանակը երբեք չի կրնար մթագնել քու յիշատակդ, սիրելի՛ Տիգրան: Կենսունակ քու խառնուածքդ, ճառագայթող քու ժպիտդ, խանդավառ խօսակցութիւնդ, լաւատեսութիւն եւ դրական ուժ փոխանցող բնաւորութիւնդ, բոլոր հարցերուն լուծում գտնող քու պայծառ միտքդ, վճռակամութիւնդ մեզի կ'ընկերանան մեր կեանքի իւրաքանչիւր օր:

Քու ծնունդովդ մեր օճախը լուսաւորող եւ երջանկութեամբ օժտող որպէս մեր անդրանիկ զաւակը, հօրդ եւ իմ օրերը իմաստաւորեցիր: Դուն էիր, որ տուիր մեր կոչումը՝ որպէս հայր եւ մայր, որ մեր մինչ այդ ունեցած բարձրագոյն պաշտօնն էր: Քու աճումիդ հետեւեցանք քայլ առ քայլ, մանաւանդ երբ սկսար բարբառել մեր մայրենի լեզուն: Ի՜նչ երջանկութիւն էր լսել «մամա» եւ «պապա» քու կանչերդ: Հետզհետէ կազմաւորուող քու մտային կարողութիւններդ մեզ կը լեցնէին ապագայի երազներով: Դպրոցական տարիներուն քու արձանագրած արտակարգ արդիւնքներդ կը յուսադրէին մեզ, որ անպայման պիտի հասնիս ապագայ ասպարէզիդ բարձունքները: Փայլուն յաջողութիւններով սկսար աւարտել համալսարանի պսակաւոր արուեստից/պսակաւոր գիտութեանց եւ մագիստրոսի ծրագիրները ու նետուեցար կեանքի ասպարէզ: Շահեցար յարգանքը գործակիցներուդ եւ պատասխանատուներուդ, մինչեւ գրաւեցիր բարձր դիրքեր միջազգային այն ընկերութիւններուն մէջ, ուր հրաւիրուեցար աշխատանքի:

1995 թուականէն սկսեալ թրծուեցար ֆինանսական աշխարհի ամենաբարդ հոլովոյթին մէջ եւ հետզհետէ հասար բարձրագոյն ղեկավարութեան ոլորտներուն: Ոչ միայն փայլեցար ասպարէզիդ մէջ ձեռք ձգած հմտութեամբդ, այլ նաեւ մարդկային արժանիքներովդ՝ իբրեւ օրինակելի առաջնորդ եւ ղեկավար: Այդ ուղղութեամբ կը վկայեն քու տնօրէնութեանդ տակ գտնուող բոլոր գործակիցներդ:

Պատանեկան օրերուդ ՀՄՄ-ի սկաուտական շարքերուն մէջ ձեռք ձգած կարգապահութիւնդ, հայրենասիրութիւնդ, հաւաքականութեան ծառայելու պատրաստակամութիւնդ՝ միանալով ընտանեկան յարկիդ տակ ստացած գաղափարական դաստիարակութեանդ, քեզ դարձուցին հայ համայնքի աչքառու երիտասարդ ուժերէն մին՝ որպէս Լիբանանի Ազգային առաջնորդարանի երեսփոխան: Այդ հանգամանքով ալ ծառայեցիր Ռըմէյլի Ս. Յարութիւն եկեղեցւոյ բարգաւաճման եւ ծուխի կարիքներուն բաւարարման:

Պէյրութի նաւահանգիստի պայթումէն ստեղծուած համատարած թշուառութեան եւ հետզհետէ աճող տնտեսական սուր տագնապին լուծումներ որոնելով, հասար ժողովուրդի համեստ խաւի ամենօրեայ պէտքերուն:

Համալսարանական ուսմամբ օժտուած հայ երիտասարդ ուժերու հանդէպ հոգածու կեցուածքովդ զանոնք առաջնորդեցիր իրենց մասնագիտութեան յատուկ պաշտօններու՝ միջազգային ընկերութիւններու մէջ: Քայլ պահեցիր անոնց յառաջխաղացքին հետ եւ քու փործառու ու հեռատես ղեկավարի ցուցմունքներովդ զիրենք հաստատեցիր տուեալ ընկերութիւններու մնայուն քատրին մէջ:

Կազմեցիր քու ընտանիքդ համալսարանական ուսմամբ օժտուած հայուհիի մը՝ Սիլվիին հետ: Նուիրուեցար ընտանիքիդ բարօրութեան եւ տիկնոջդ հետ դաստիարակեցիր մանչդ՝ Արեգը եւ դուստրդ՝ Սարիկը: Անոնք վայելեցին քու ամբողջական սէրդ եւ հոգածութիւնդ: Չխնայեցիր որեւէ բան անոնց ուսման վերաբերեալ: Անոնք յաճախեցին Ամերիկեան համալսարանի կից ինթըրնէշընըլ քոլէճ, ուր դուն եւ եղբայրդ՝ Ռազմիկը ստացած էիք ձեր նախակրթարանի եւ երկրորդականի ուսումը: Ուզեցիր, որ զաւակներդ ստանան որակաւոր ուսում՝ միջազգային մակարդակով:

Հաւատացած ըլլալով կեանքիդ մէջ քու ընտանիքիդ դերակատարութեան, ուզեցիր նոյն արժէքները փոխանցել քու զաւակներուդ: Աշխատանքի հանդէպ սէր, կարգապահութիւն, ծնողաց հանդէպ յարգանք, ծառայասիրութիւն, տկարներու հանդէպ կարեկցութիւն: Կարիքաւորներուն օգնելու առաքինութիւնը կը փոխանցէիր քու կեանքիդ օրինակով:

Հօրդ՝ գրագէտ Պէպօ Սիմոնեանին հանդէպ խոր ակնածանք ունէիր եւ հպարտ էիր անոր հարուստ վաստակով՝ իբրեւ գրող, հասարակական դէմք, ղեկավար, կրթական առաջնորդ եւ մանկավարժ: Մօտէն կը հետեւէիր անոր վերլուծումներուն՝ կուսակցական, ազգային, քաղաքական եւ մշակութային մարզերու վերաբերեալ: Ընտանեկան այս դպրոցին մէջ թրծուեցար եւ դարձար ազգային կեանքի դերակատարներու հոյլին ընտրանիներէն մին:

Բացառիկ հոգածութիւն ցուցաբերեցիր մօրդ նկատմամբ, յատկապէս հօրդ մահուընէն ետք: Գնահատանքով կ'արտայայտուէիր քու ուսմանդ եւ ասպարէզիդ մեծապէս նպաստած մօրդ դերակատարութեան մասին՝ իր համալսարանի դասախօսի հանգամանքով: Եղբօրդ հանդէպ ունեցած մտերմութիւնդ, գործակցութիւնդ, անոր ընտանիքին հանդէպ տածած բացառիկ սէրդ մաս կը կազմէն քու արժանիքներուդ: Երկու եղբօր միջեւ գոյութիւն ունեցող ձեր կապը այնքան ամուր եղած է, որ հիացումի առարկայ դարձած է ձեր անմիջական շրջանակներուն մէջ:

Խորապէս ընկերային խառնուածքովդ մշակեցիր բարեկամութիւններ գիտակից կեանքիդ բովանդակ ընթացքին: Ցուցաբերեցիր հաւատարմութիւն եւ նուիրում բարեկամներուդ եւ անոնց ընտանիքներուն նկատմամբ:

Տունդ միշտ լեցուն էր հարազատներով եւ բարեկամներով, որոնք ուրախութեամբ կը հիւրասիրէիր կնոջդ՝ Սիլվիին հետ: Ազգականական եւ բարեկամական շրջանակներուն դիմագրաւած դժուարութիւններուն լուծման մասնակից էիր: Կը հասցնէիր անոնց քու նիւթական եւ բարոյական աջակցութիւնդ: Միշտ պատրաստ էիր գործնականօրէն սատարելու անոնց խնդիրներու լուծման:

Փոքր տարիքէդ ընտանիքէդ ստացած քրիստոնէական դաստիարակութիւնդ քեզի հետ մնաց ամբողջ կեանքիդ: Սուրբ գրային սկզբունքներով ապրեցար քու կեանքդ: Հաւատացիր աղօթքի ուժին եւ դիմեցիր Աստուծոյ քու բոլոր ծրագիրներուդ յաջողութեան համար: Ինծմէ եւս կը խնդրէիր աղօթք եւ կը հաւատայիր, որ անոնք անպայման պատասխանի պիտի արժանանային: Քու առաքինութիւններուդ մաս կը կազմէին պարկեշտութիւնը, արդարամտութիւնը, ճշմարտախօսութիւնը, ծառայութիւնն ու աշխատասիրութիւնը, որոնք քու քրիստոնէական նկարագիրդ կը ցոլացնէին նաեւ:

Լաւատեսութիւնը կը կազմէր քու ամենացայտուն յատկանիշդ: Ամենադժուարին եւ բարդ իրավիճակներուդ մէջ միշտ ելք մը կը գտնէիր քու պայծառ լաւատեսութեանդ պատճառով: Մութ ամպերը կը փարատէին, երբ լծուէիր աշխատանքի, քու դրական կեցուածքովդ կը յաղթահարէիր բոլոր դժուարութիւնները: Որքան պէտք ունինք այսօր քու ներկայութեանդ, յատկապէս լիբանանեան իրականութեան մէջ հետզհետէ քայքայուող տնտեսութիւնը, դրամատնային անկեալ վիճակը, ապահովական քաոսը, դեղորայքի եւ այլ կենսական նիւթերու անբաւարարութիւնը քաղաքացիները հասցուցած են ծայրայեղ յուսահատութեան: Արդեօք ի՞նչ ձեւով մեզի պիտի օգնէիր դուրս գալու մեր այս անբաղձալի վիճակէն:

Գիտենք, որ ներկայ ես մեր կեանքին մէջ ամենօրեայ դրութեամբ: Հոգիդ կը թեւածէ մեր շուրջը եւ մեզի ուժ, կորով, քաջալերանք կը փոխանցէ: Խաղաղութեան մէջ կը պահէ մեզ, որպէսզի քու յիշատակդ մեզ գօտեպնդէ, դուրս բերէ մեր խոր վիշտէն: Յաւիտենականութեան մէջ ես արդէն՝ շրջապատուած լուսաւոր հոգիներով:

Թող մենք եւս արժանի դառնանք միանալու քեզի՝ իբրեւ մէկ մասնիկը արդարներու փաղանգին:

**ՄԱՅՐԴ՝**
**ԱԶԱՏՈՒՀԻ ՍԻՄՈՆԵԱՆ-ԳԱԼԱՅՃԵԱՆ**

# ԴԵՐԱՍԱՆ ԵՒ ԲԵՄԱԴՐԻՉ ՎԻԳԷՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Համազգայինի պետական թատրոնը չորեքշաբթի, 19 յունուար 2022-ին «Գինը» ներկայացումը (զոր ան առաջին անգամ ըլլալով Լիբանանի մէջ բեմադրեց՝ Համազգայինի «Գ. Իփէկեան» թատերախումբին հետ) նուիրեց Վիգէն Ստեփանեանի տարելիցին: Ներկայ էին Վիգէնին այրին՝ Նարինէ Յարութիւնեանը եւ դուստրը՝ Թամար Ստեփանեանը, ինչպէս նաեւ Վիգէնին բոլոր բարեկամները:

Պէտք է ըսել, որ Վիգէն Համազգայինին մօտիկ եւ Համազգայինին ծառայած արուեստագէտներէն էր:

Վիգէնը եւ Նարինէն իրենց կեանքի կարեւոր մէկ փուլը նուիրեցին լիբանանահայութեան երաժշտասէր եւ թատերասէր աշակերտներուն:

Վիգէնը եղաւ «Արեգ» թատերախումբի հիմնադիր, «Գասպար Իփէկեան» թատերախումբի բեմադրիչ, դերասան, գեղանկարիչ, երգիչ, արուեստի քննադատ, սակայն անոր դերասանական հմայքը տարբեր տպաւորութիւն կը ձգէր եւ իւրայատուկ վայելք ունէր: Արդարեւ, Վիգէնին ձայնը, բեմական կեցուածքը, առոգանութիւնը, տիպարներու արագ ու հարազատ մարմնաւորումը եւ իր ճկուն կեցուածքը մեծապէս կը ներգրաւէին հանդիսատեսը:

Իրապէս բախտաւոր ենք, որ Սօս Սարգսեաններ, Վարուժան Խտըշեաններ, Վիգէն Ստեփանեաններ տեսած սերունդ ենք:

Վստահ եմ, որ Համազգային պետական թատրոնը այդ գիշեր բաւական յուզիչ եւ յիշատակներով լեցուն երեկոյ մը անցուց:

Գիտեմ, որ Դաւիթ Յակոբեանի փակման սրտի խօսքը ամբողջ սրահը լացուցած է:

Լսեցի նաեւ, որ Թամարն ալ իր խօսքին մէջ անդրադարձած է Վիգէնին՝ Լիբանանի մէջ ծառայութեան:

Ճիշդ է, մէկ տարի անցած է: Ընդհանուր այս տակնուվրայ վիճակին մէջ օրէ օր բացականերն ալ մեր հոգեկանին վրայ սկսած են աւելիով ազդել:

Գիտենք, որ պիտի վարժուինք:

Գիտենք, որ կեանքը կը շարունակուի:

Սակայն միշտ տեղ մը կեանքին մէջ պարապութիւնը ճնշող հոգեվիճակ կը ստեղծէ:

Վիգէն Ստեփանեանը Հայաստանի եւ լիբանանահայութեան թատերական կեանքին մէջ մեծ վաստակ ունէր: Անոր ճրագին շողերէն եւ արդիւնքներէն բոլորս ալ օգտուած ենք եւ վայելած ենք, պիտի շարունակենք ալ օգտուիլ եւ վայելել:

Թող յիշատակը անթառամ մնայ: Համազգայինն ալ իր բազմաբնոյթ գործունէութեամբ, մանաւանդ թատերական ճրագը միշտ լուսաւոր եւ փայլուն պահէ:

**ՅԱԿՈԲ ԼԱՏՈՅԵԱՆ**

# ՏԱԿԱՒԻՆ ՎՃՌԱ՞Ծ ԵՆՔ

Ինչո՞ւ եւ ի՞նչ վճռեցինք: Ո՞ր նիւթի շարունակութիւնն է: Այս գրութիւնը նիւթի մը շարունակութիւնը չէ՛, այլ՝ մեր կայացուցած որոշումներուն եւ տուած խոստումներուն յիշեցման նամակը: Ընդհանրապէս տօնական գեղեցիկ օրերուն կը սկսինք խորհիլ եւ որոշումներ տալ, այսպէս՝ «Այս տարի լաւ մարդ պիտի ըլլամ: Այս տարի շատերու պիտի օգնեմ: Բոլոր այն մարդոց հետ, որոնց հետ կապերս խզած եմ, զանոնք պիտի վերամշակեմ: Բարի քրիստոն- եայ ու հաւատացեալ պիտի ըլլամ: Աղօթական կեանքիս մէջ առաւել եւս պիտի խորանամ»: Եւ այսպէս, խոստումներու շարքը կրնայ երկարիլ ու երկարիլ:

Սիրելի՛ ընթերցող, դո՛ւն գիտես, թէ ի՛նչ խոստացած ես նախ Աստուծոյ, ապա՝ անձիդ եւ շրջապատիդ: Սակայն տակաւին նոյն վճռակամութեանդ վրա՞յ ես:

Մենք ամէն օր բարի մարդ մնալու պարտաւորութիւնը ունինք, որովհետեւ մարդկութիւնը մեզմէ այդ կը պահանջէ: Չարացած մարդկութեան հետ մենք եւս պէտք չէ չարանանք: Մենք պէտք է տարբեր ըլլանք՝ բոլորին մէջէն **մատնորոշուող**: Այսօր մարդկութիւնը կը տառապի բարիներու չգոյութենէ: Վճռած էինք բարի ըլլալ, սակայն եկէք՝ **մնա՛նք**: Վճռելը ամենէն դիւրինն է, **մնալը՝ դժուար**:

Տակաւին, վճռած էինք մնայուն աղօթող ըլլալ, չէ՞: Գիտէ՞ք՝ մեր աղօթքի ձայնով Աստուծոյ ականջները կ'ուրախանան, սիրտը կը ցնծայ եւ մեր աղօթական կեանքի ճամբով կը լսէ մեր բոլոր մտահոգութիւններն ու ի պահանջել հարկին կու տայ **յարմարագոյն** լուծումը: Արձանագրուածները ճերմակ էջը գեղեցկացնելու համար չե՛ն, այլ՝ իրականութեամբ իմաստաւորուած ճշմարտութիւն, զոր կարելի է հասկնալ, ըմբռնել ու մանաւանդ ապրիլ՝ **փործառութեամբ**:

Վճռած չէի՞նք, որ մեզմէ նեղացող կամ մեր նեղացած անձերուն հետ դարձեալ բարեկամութիւն մշակել: Մտածած էինք դարձեա՛լ ուրախացնել զանոնք ու դարձեա՛լ շահիլ անոնց ներկայութիւնը մեր կեանքերէն ներս: Եթէ պիտի ըսես՝ կտրուածը չի՛ շինուիր, ուրեմն քեզի կ'ըսեմ՝ սակայն **վիրաւորուածը կը դարմանուի**:

Ինչպէս ինծի համար, նոյնպէս քեզի համար, սիրելի՛ ընթերցող, ամենէն նեղացուցիչ մարդը կրնայ խոստմնադրուժ անձը ըլլալ: Կարելի չէ շուտով դարձեալ վստահիլ **խոստմնա- դրուժ** մարդուն: Կարելի չէ՛, որովհետեւ կրնայ ամէն ինչի մէջ այդպէս ըլլալ, եւ ինչպէս արձանագրեցի, կրնայ սովորութեան վերածած ըլլալ, որմէ ձերբազատիլը քիչ մը դժուար է: Խոստմնադրուժ մարդը նաեւ կրնայ անվստահելի ըլլալ, որովհետեւ ան կրնայ ամէն բան պատահականութեան կամ անտարբերութեան ձգել, ուստի, եկէք, մեր խոստումին տէրն ու տիրականը ըլլանք, որպէսզի մթութեան մէջ լոյսով փնտռուինք:

Պօղոս առաքեալի արձանագրած հետեւեալ հատուածը միասնաբար վերծենք կեանքի նշանաբանի. **«Նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով»** (Կողոսացիս 3.10):

**ՀԱՅՐ ԱՒԵՏԻՔ**

# ԻՆՉՈ՞Ւ Է ԳՈՀՈՒՆԱԿ ԱԶՐՊԷՅՃԱՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՈՍԿՈՎԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ...

2009 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնած հայ-թուրքական հաշտեցման գործընթացի (ֆութպոլային դիւանագիտութիւն) վիժեցման գործում մեծ ու որոշիչ դերակատարութիւն ունեցաւ սփիւռքը, որի քաղաքական ու հասարակական հատուածները միահամուռ ընդդիմացան ժամանակի ՀՀ իշխանութիւնների վարած քաղաքականութեանը:

Հետագային էլ, երբ պարզուեց, որ Թուրքիան, հակառակ իր յայտարարութիւններին, այդ հաշտեցմանը վերաբերւում է լոկ նախապայմաններով, ինքն էլ «արդարացաւ» նրանով, որ իր կըրտսեր եղբայր Ազրպէյճանը խիստ դժգոհ է եղել հայ-թուրքական հաւանական կապերի ստեղծմամբ, քանի դեռ արցախեան հարցը իրենց ուզածով չի հանգուցալուծուել:

Թուրք-թաթարական այս ճչացող նախապայմանը մնաց իր ուժի մէջ մինչեւ 2020 թ. նոյն թուրք-թաթարական համատեղ յարձակման արդիւնքում ստեղծուած աշխարհագրա-քաղաքական նոր իրավիճակը, որին մինչ օրս էլ մատնըւել է Հայաստանի Հանրապետութիւնը...

Հիմա, սակայն, ինչպէս Ազրպէյճանը ամենաբարձր մակարդակներով է յայտարարում, ինքը եւս գոհունակ է 2022 թ. յունուարի 14-ի հայ-թուրքական բանագնացների մոսկովեան հանդիպումից՝ դրական գնահատելով «տարածաշրջանում խաղաղութեանը միտող նոր գործընթացը»:

Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ 2009-10-ի թուրք-թաթարական արցախեան հարցի կարգաւորման իրենց օգտին լուծելու նախապայմանի իրականացումը... Ի՞նչ է սա նշանակում: Նշանակում է այն, որ մինչ մոսկովեան տուեալ հանդիպմանը Թուրքիայի ղեկավարութեան եւ, ցաւօք, Հայաստանի իշխանաւորների կողմից շարունակ բարձրաձայնուած «առանց նախապայմանների հանդիպում-բանակցութիւնները» մեղմ ասած՝ հեքիաթներ են լոկ... Նշանակում է նաեւ, որ մինչ «առանց նախապայմանների հանդիպումները» թուրք-թաթարական նախապայմանները ապահովուել են՝ ի վնաս Հայաստանի ու հայութեան:

Արցախեան հարցի ազրպէյճանանպաստ լուծման առումով, արդէն Ազրպէյճանն ինքն է յայտարարում, իսկ բացառուած էլ չէ, որ թուրքերի գոհունակ, վստահ ու հաճեպօրէն մոսկովեան հանդիպմանը մասնակցելու հիմք են հանդիսացել առհասարակ Հայաստանի կողմից Հայոց ցեղասպանութեան միջազգայնօրէն չարծարծման, ինչպէս նաեւ «թուրք-ազրպէյճանական հողային ամբողջականութեան» (ներառեալ՝ Սիւնիքի նկատմամբ յաւակնութիւնները) ու նաեւ միւս նախապայմանները ապահովուած տեսնելու երիցս հայաստանավնաս հանգամանքները...

Ահաւասիկ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան, հողային ամբողջականութեան ու անվտանգութեան արցախեան հայանպաստ հանգուցալուծման ու մասնաւորապէս Հայոց պահանջատիրական մաքառումները լինելով գերազանցապէս համազգային նշանակութեան հիմնախնդիրներ՝ պահանջում են հանգուցալուծման համարժէք վերաբերմունք, եւ ինչպէս 2009 թուականի թուրքական խարդաւանքները, այս նորագոյնն էլ ուշ կամ շուտ տապալուելու է մեր համազգային անտեղիտալի ջանքերի շնորհիւ...

**ԴԵՐԵՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ**
*«Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր*